

ՍՈՒՐԻԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԴԱՏՈՒՐԱԿՈՒԹԻՒՆԸ ԵՐԵՎԱՆԻ ՄԷՋ ԴԱՇՏՈՆԱԿԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ ՈՒՆԵՅԱԼ

24 Ապրիլ 2024-ին, սուրիական խորհրդարանական պատուիրակությունը Երեւան ժամանեց Հայոց Ցեղասպանության 109-րդ տարելիցի ոգեկոչական արարողություններուն մասնակցելու եւ հանդիպումներ ունենալու միջեւ 28 Ապրիլ:



Դատուիրակության Նախագահեց Սուրիոյ Խորհրդարանի փոխնախագահը՝ Լյ 2 >

ՃԵՉԻՐԵԻ ՀԱՅՈՒԹԻՒՆԸ ՈՂԵԿՈՉԵՅ ԱՊՐԻԼԵԱՆ ՍՐԲԱՊԱՏՈՒԿՆԵՐՈՒՆ ՅԻՇԱՍՎԸ

Հովանաւորութեամբ Բերիոյ Հայոց Թեմի Առաջնորդ Գերջ. Տ. Մակար Արք. Ազգարեանի, Նախագահութեամբ Ճեզիրեի Առաջնորդական Փոխա-



նորդ հոգջ. Տ. Լեւոն Վրդ. Եղիայեանի, կազմակերպութեամբ կեդրոնական յանձնախումբին, Չորեքշաբթի, 24 Ապրիլ 2024-ի երեկոյեան «Կիւլպէնկ-Վանա Կիրակոսեան»

Շաբ. Լյ 9 >

ԼԱԹԱՔԻՈՅ ՄԷՋ ՀԱՅՈՅ ԳԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՅԻՇԱՍՎՈՒՄԻ ԶԵՆՆԱՐԿՆԵՐ

Ա. ՍՈՍՎԱՍՏՈՒԹԻՒՆ

Վերանորոգելով պահանջատիրութեան իրենց ուխտը 23 Ապրիլ 2024-ի երեկոյեան, ՍԵՄ-ի «Կայծակ» մասնաճիւղի անդամները Հայոց Ցեղասպանության 109-րդ տարելիցին առիթով կազմակերպեցին մոմավառութիւն Լաթաքիոյ Ս. Աստուածածին եկեղեցւոյ ապրիլեան Նահատակներու յուշակոթողին դիմաց: Մոմավառութեան մասնակցեցան՝ Ս. Աստուածածին եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Տէր Վազգէն Աւագ Բնկ. Զեռնկերեան, Պատկան Մարմինի եւ միութիւններու ներկայացուցիչներ, եկեղեցւոյ Թաղականութեան անդամներ:



Նայիրի Կարապետեան Շաբ. Լյ 9 >

ԴԱՄԱՍԿՈՍԻ ՄԷՋ ՀԱՆԴԻՍԱԽՈՐ ԿԵՐՊՈՎ ՅԻՇԱՍՎՈՒԹԵԱՆ ՀԱՅՈՅ ԳԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ 109-ԱՄԵԱՎԸ

Հովանաւորութեամբ Բերիոյ Հայոց Թեմի Բարեչախ Առաջնորդ Գերջ. Տէր Մակար Արք. Ազգարեանի, կազմակերպութեամբ «Ահարոնեան» կեդրոնի վարչութեան եւ միութիւններու՝ համազգային «Լ. Շանթ», ՀՄԸՄ-ի, ՍՕ Խաչի «Երեբունի», ՍԵՄ-ի «Դրօշակ» եւ ՍՊՄ-ի «Ռոստոմ» մասնաճիւղերու վարչութեանց, տեղի ունեցաւ Հայոց Ցեղասպանության 109-ամեակի նուիրած հանդիսարար ոգեկոչում, Չորեքշաբթի, 24 Ապրիլ, 2024-ին, երեկոյեան ժամը 8:00-ին, «Սայիտթ Տիմաշք» եկեղեցւոյ ներքնասրահէն ներս:



Հանդիսութեան ներկայ էին Բերիոյ Հայոց Թեմի միաբան Հոգջ. Տէր Մանուկ Վրդ. Պարիխանեան, Դամասկոսի Կաթողիկէ Հայոց Թեմի Առաջնորդ Արհի. Տէր Գեորգ Եպս. Ասատուրեան եւ համայնքի ժողովրդապետ Գերայ. Տէր Գեորգ Ծ. Վրդ. Պահեան, «Ահարոնեան» կեդրոնի վարչութեան ներկայացուցիչը, մարզական, մշակութային եւ բարեսիրական միութիւններու շրջանայինի եւ վարչութիւններու ներկայացուցիչներ, Ազգ. Միացեալ ճեմարանի տնօրէնուհին եւ հոգաբարձութեան ներկայացուցիչը, հիւրեր եւ հայորդիներու հոծ բազմութիւն մը:

Օրուան հանդիսավար Յակոբ Շիրինեան ջերմօրէն ողջունեց ներկաները, եւ յայտնեց, թէ Հայոց Ցեղասպանության



Սոնա Անտրեան Շաբ. Լյ 9 >

ՀԱՄԱԳՈՒՄԱՐ Ի ՆՊԱՍՏ ԱՐՅԱՆԻ ԻՐԱՌԻՔՆԵՐՈՒ ՄԻԶԱԶԳԱՅՆԱՅՄԱՆ

ՆՍՕՏՏ Արամ Ա. Վեհափառ Հայրապետին Նախագահութեամբ եւ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան «Կիլիկիա Վերլուծական Հարթակ»-ի կազմակերպութեամբ, 20-22 Ապրիլ 2024-ին, Անթիլիասի Մայրավանքին մէջ տեղի ունեցաւ «Արցախի Իրաւունքներու Վերականգնումի Հրամայականը՝ Ընդդէմ Ատրպէյճանի Ցեղասպանական Զարգացականութեան» խորագրով միջազգային համագումարը: Եռօրեայ նիստերուն մասնակցեցան Հայաստանէն, Արցախէն եւ Սփիւռքի տարբեր շրջաններէն շուրջ 30 պատմաբաններ, միջազգային իրաւունքի մասնագետներ եւ քաղաքագետներ:



Վեհափառ Հայրապետին հրաւերով համագումարին ներկայ էին Նաեւ Միջազգային Զրեական Դատարանի առաջին դատախազ դոկտ. Լուիս Մօրէնօ Օքամփօ, ինչպէս նաեւ Արցախի Ազգային Ժողովին ստեղծած Արցախի Ժողովուրդի հիմնարար իրաւունքներու պաշտպանութեան հարցերով յանձնախումբի աշխատանքները համա-

Շաբ. Լյ 4 >

Խմբագրական

ԱՇԽԱՏԱՒՈՐԻ ԻՐԱՒՈՒՆՔԻՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՐԴԿԱՅԻՆ ՈՒ ԱԶԳԱՅԻՆ ՊԱՐՏԱՒՈՐՈՒԹՅՈՒՆ Է

Մայիս ՄԵԿԻՆ դարձեալ կը յիշենք մարդու աշխատանքի ազատագրութեան մեծ շարժումը եւ աշխատաւորական իրաւունքներու պաշտպանութեան քաղաքական պայքարը, որմէ դար մը եւ քառորդ ժամանակաշրջան ետք տակաւին կը յամենայ աշխատաւորի իրաւունքներու պաշտպանութիւնը շարք մը երկիրներու մէջ:

Եթէ որոշ երկիրներու մէջ կը պաշտպանուին անոնց իրաւունքները, շահագործումի երեւոյթները կը փոխուին, նոյնիսկ ժողովրդավարութեան շատագոյժ կարգ մը երկիրներու մէջ աշխատաւոր խաւը քաղաքական պայքարի գերի դարձնելու երեւոյթներ ի յայտ կու գան: Նման պարագաներու մէջ պաշտօնէութիւնը կը ստիպուի իշխանութեան քաղաքականութեան կողմնակիցը ըլլալ՝ նոյնիսկ իր անհամաձայնութեան պարագային, պարզապէս աշխատանքը չկորսնցնելու համար:

Շարք մը երկիրներու մէջ իշխանութիւններու փոփոխութեան հետ ականատեսը կ'ըլլանք յատկապէս պետական հաստատութիւններու պաշտօնէութեան փոփոխութեան այնպիսի եղանակի մը, որ ուղղակի խախտում կը համարուի ոչ միայն աշխատաւորի, այլեւ ընդհանրապէս մարդու իրաւունքներու:

Միւս կողմէ պատերազմ ապրող երկիրներուն մէջ աշխատաւորներու իրաւունքները, զուգահեռաբար մարդկային իրաւունքներուն, զգալիօրէն կը տուժեն, որովհետեւ պատերազմի ենթակայ երկրին տնտեսութիւնը փուլ կու գայ, անոր հետ փուլ կու գան մարդկային իրաւունքներ, ընկերային վիճակներ եւ այլն: Նման պարագաներու աշխատանքն ու աշխատուժն են պատերազմէ դուրս եկած ու վերականգնումի ուղի մտած երկրի վերածադկումին գլխաւոր գրաւականները, իսկ աշխատուժը պահելու եւ զայն գաղթի ալիքին ենթակայ չդարձնելու համար աշխատաւոր խաւին իրաւունքներու պաշտպանութիւնը նման պետութիւններու օրակարգային հարցը պէտք է դարձնել ու լուծումները չուշացնել:


Աշխատող խաւն է պետութեան նեցուկ կանգնողը, երկրի վերականգնումի ծրագիրները կեանքի կոչողը, տնտեսութեան բարելաւման նպաստողը, եթէ չշահագործուի ու իր արդար իրաւունքներուն արժանանայ:

Գաղթի տուն տուող պատճառներուն հիմնականը մարդկային եւ յատկապէս աշխատաւոր խաւին իրաւունքներու հարցն է: Գաղթի ճամբան բռնողներ ապահովութեան փնտրման կողքին կը ցանկան ուղղուիլ այնպիսի երկիրներ, ուր պաշտպանուած պիտի ըլլան իրենց իրաւունքները, ուր պիտի աշխատին օրէնքով սահմանուած ժամերով, վարձատրուին իրենց կենսամակարդակի պահպանման համապատասխան գումարով, իսկ աշխատանքի ընթացքին պիտի վայելեն իրենց մարդկային բոլոր իրաւունքները:

Հայկական մեր իրականութեան մէջ աշխատաւորներու իրաւունքին պաշտպանութիւնը մաս կազմած է մեր ազգային ազատագրութեան պայքարի հուլովոյթին, չէ անջատուած անկէ, որովհետեւ ազատագրումը ոչ միայն հողի ազատագրումն է, այլեւ մարդու ազատագրումը՝ իր երկիրը բռնագրաւող, ասպատակող ուժէն, իր մարդկային իրաւունքները կաշկանդող դրամատերերէն ու իր աշխատաւորի իրաւունքները սահմանափակող յետամնաց վարչակարգերէն:

«Գ.»

-Կիրակի, 28 Մայիս 2024-ին, Սուրիոյ նախագահ Պաշար ալ-Ասատ ընդունեց Պահրէյնի արտաքին գործոց նախարար Ապտուլլաթիֆ պըն Ռաշէտ ալ-Զիանին:



Հանդիպումին ընթացքին կողմերը խորհրդրդակցեցան երկու երկիրներու յարաբերութեան զարգացման, ինչպէս նաեւ Պահրէյնի մէջ տեղի ունենալիք արաբական զագաթնաժողովին գծով Պահրէյնի տարած նախապատրաստական աշխատանքին շուրջ:

-Սուրիոյ կառավարութիւնը Բանտորներու, Արեւելեան ուղղափառ եկեղեցիներու Ս. Յարութեան, ինչպէս նաեւ Սուրիոյ Նահատակներու տներուն առիթով Սուրիոյ մէջ պետական արձակուրդ յայտարարեց Զոռեքշաբթի, 1 Մայիսէն Երկուշաբթի 6 Մայիս 2024:



-Նախագահ Պաշար ալ-Ասատի Սուրիոյ նահատակներու, վիրաւորներու եւ անյայտ կորածներու ընտանիքներուն ցուցաբերած հոգատարութեան լոյսին տակ, վերոյիշեալ ընտանիքներուն 6 Մայիսին՝ Սուրիոյ Նահատակներու տներուն առիթով յատկացուելիք տարեկան նուէր գումարը 6 անգամով բազմապատկուեցաւ:



-Սուրիական Բանակի Ընդհանուր Հրամանատարութիւնը վարչական հրամանագիր մը հրապարակեց, որուն համաձայն 1 Յունիս 2024-ին զօրացումի կ'ենթարկուին հետեւեալ զինուորական կարգերը ունեցող զինուորական ծառայողները:

- 1- 2ինուորական ծառայողներու ծառայութիւն ունեցող սպաներ, որոնք մինչեւ 31 Մայիս 2024 կը բոլորեն աւելի քան մէկ տարուան զինուորական պահեստային ծառայութիւն:
- 2- Պահեստային ծառայութիւն ունեցող աստիճանաւոր սպաներ եւ զինուորներ, որոնք մինչեւ 31 Մայիս 2024 կը բոլորեն աւելի քան 6 տարուան զինուորական պահեստային ծառայութիւն:

ՍՈՒՐԻԱԿԱՆ...

Սկիզբ՝ էջ 1

գահ Աքրամ Աճալանին, ներկայութեամբ սուրիական-հայաստանեան խորհրդարանական բարեկամութեան յանձնախումբի նախագահ դոկտ. Լիւսի Իսկէնեանի եւ Սուրիոյ Խորհրդարանի անդամ Հասան Մաալլէթի:

Այցելութեան շրջագիծէն ներս պատուիրակութեան անդամները հանդիպում ունեցան Հայաստանի արտաքին գործոց փոխնախարար Վահան Կոստանեանի հետ, ներկայութեամբ Հայաստանի մէջ Սուրիոյ դեսպան դոկտ. Նորա Արիսեանի եւ Սուրիոյ մէջ Հայաստանի դեսպան Տիգրան Գեորգեանի:

Պատուիրակութիւնը այլ հանդիպում մը ունեցաւ Հայաստանի նախագահ Վահագն Խաչատուրեանի հետ, ներկայութեամբ ՀՀ ԱԺ նախագահի տեղակալ Յակոբ Արշակեանի, Հայաստանի մէջ Սուրիոյ դեսպան դոկտ. Նորա Արիսեանի եւ Սուրիոյ մէջ ՀՀ դեսպան Տիգրան Գեորգեանի:

2ոյգ հանդիպումներուն ընթացքին կողմերը խորհրդակցեցան երկու երկիրներու յարաբերութեան զարգացման շուրջ:

Պատուիրակութիւնը այցելեց նաեւ Հայաստանի մէջ պատուած արաբ ժողովուրդին նուիրուած երախտագիտութեան յուշարձանին վայրը:

Յիշենք, որ 24 Ապրիլ 2024-ին, պատուիրակութիւնը Հայաստանի մէջ Սուրիոյ Հանրապետութեան դեսպան դոկտ. Նորա Արիսեանի ընկերակցութեամբ ուղղուեցաւ Ծիծեռնակաբերդի Հայոց Տեղասպանութեան Յուշահամալիր, ուր անմար կրակին մօտ տեղի ունեցաւ ծաղկեմատոյց՝ ի յիշատակ Հայոց Տեղասպանութեան նահատակներուն:

Ետքը պատուիրակութեան անդամները շրջագայեցան Հայոց Տեղասպանութեան թանգարանէն ներս եւ ծանօթացան ցուցադրուած արխիւներուն:

Լուրեր Հայաշխարհին

ՀՅԴ ԲԻՐՈՅԻ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅՈՑ ԺԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ 109-ԱՄԵԱԿԻՆ ԱՌԻՐՈՎ



Հայոց Ցեղասպանութեան յիշատակի օրուան հերթական տարելիցի նախօրեակին, կանգնած ենք նոր գոյաբանական մարտահրաւերներու դեմ յանդիման: Մեր անժամանցելի իրաւունքներու պաշտպանութեան հարցը այսօր, աւելի քան երբեք, վերանորոգելու անհրաժեշտութիւն կայ:

Վերջին քանի մը տարիներուն նոր թափ ստացեր են թուրք-ատրպէյճանական դաշինքի թշնամական ոտնձգութիւնները Հայաստանի եւ հայութեան դէմ: Ակնյայտ է, որ հետեւողականօրէն թելադրուող շարք մը նախապայմաններն է նաեւ Ցեղասպանութեան միջազգային ճանաչումը հետապնդելէն հրաժարելու պահանջը:

Հայաստանի իշխանութեան ներկայացուցիչները արդէն իսկ անթաքնան կերպով սկսեցին յառաջ մղել թրքական ժխտողական մօտեցումները: Օսմանեան Թուրքիոյ կողմէ հայ ժողովուրդին նկատմամբ գործադրուած Ցեղասպանութեան կապակցութեամբ, օրերս կատարուեցան յայտարարութիւններ, որոնք մինչեւ այսօր յառաջ մղուած են պաշտօնական Անգարայի կողմէ եւ կը հանդիսանան բացառապէս թրքական թեզեր: ԸՊ-ական իշխանութեան այս դիրքորոշումը Հայոց Ցեղասպանութեան իրողութիւնը կասկածի տակ դնելուն միտուած անհանդուրժելի քայլ է:

Իր հերթին, երկրի քաղաքական առաջին դեմքը իր սեփական ժողովուրդին նկատմամբ գործադրուած Ցեղասպանութիւնը կը բնութագրէ իբրեւ Մեծ Եղեռն՝ փաստացի հրաժարելով այն իրաւաքաղաքական գնահատականէն, որ հաստատուած է հայ եւ օտար պատմաբաններու եւ ցեղասպանագետներու կողմէ եւ ընդունուած ու դատապարտուած է ՄԱԿ-ի Մարդկային իրաւանց յանձնախումբի, շարք մը այլ միջազգային ատեաններու, բազմաթիւ երկիրներու, որոնց կարգին՝ գերտէրութիւններու խորհրդարաններու ու կառավարութիւններու եւ պետութիւններու ղեկավարներու կողմէ:

Այս նոյն պարունակին մէջ փորձ կը կատարուի իրարու հակադրել պատմական ու իրական Հայաստանը, մեր անցեալն ու ներկան, հայրենիքն ու պետութիւնը:

Ակնյայտ է, որ ԸՊ-ական իշխանութեան դրսեւորած այս ժխտողական կեցուածքը հետեւողական շարունակութիւնն է թուրք-ատրպէյճանական պարտադրանքներուն դիմաց տեղի տալու որդեգրուած քաղաքականութեան:

Իբր թէ Ատրպէյճանի եւ Թուրքիոյ հետ յարաբերութիւններու կարգաւորման միտող, խաղաղութեան հասնելու Հայաստանի Հանրապետութեան ներկայ իշխանութիւններու այս վարքագիծը ոչ միայն պիտի չհասնէ տարածաշրջանին մէջ խաղաղութեան եւ կայունութեան հաստատման, այլ նաեւ պիտի վաւերացնէ ուժի, կամ ուժի սպառնալիքով հարցեր լուծելու նախընթաց, բան մը, որ կը հակասէ միջազգային օրէնքին:

Յատկանշական է, որ այս դատապարտելի քաղաքականութիւնը կ'իրականացուի այն պայմաններուն տակ, երբ Անգարա-Պաքո առանցքը Ցեղասպանութիւն գործադրէ Արցախի հայ բնակչութեան նկատմամբ եւ ցեղային գտումի ենթարկէ Արցախը: Նոյնիսկ այս պահուն ալ Ատրպէյճանը կը շարունակէ մշակութային ցեղասպանութիւնը Արցախի մէջ այն նոյն ձեռագիրով, որով Թուրքիան հայկական հետքերը տասնամեակներէ ի վեր կը վերացնէ Արեւմտահայաստանի մէջ:

Կասկած չկայ սակայն, որ հայ ժողովուրդը, ի Հայաստան եւ ի Սփիւռս աշխարհի, վճռականօրէն տէր է իր արդար իրաւունքներուն, եւ Հայաստանի որեւէ իշխանութիւն իրաւասու չէ հրաժարելու այդ իրաւունքներէն:

ՀՅԴ ԲԻՐՈ
23 Ապրիլ 2024

ԶԱՆԵՐՈՎ ԺՈՂՈՎՐԿՅԻՆ ԵՐԹ ԴԵՊԻ ՇԻԾԵՆԱԿԱՔԵՐԴԻ ԲԱՐՉՈՒՆԸ՝ «ԶԱ՛ՐԿ, ԵՐԲ ՀԱՆՏՈՒՄ ԵՆ ԶԵՉ» ԽՈՐԱԳԻՐՈՎ

23 Ապրիլին՝ Հայոց Ցեղասպանութեան 109-րդ տարելիցի նախօրեակին, Երեւանի Հանրապետութեան հրապարակէն սկսաւ ՀՅԴ Հայաստանի երիտասարդական եւ Նիկոլ Աղբալեան ուսանողական միութիւններու նախաձեռնած աւանդական ջախերով երթը:

Ջախերով երթը այս տարի կը կրէր «Չա՛րկ, Երբ հալածում են քեզ» խորագիրը:

Երթի սկիզբէն առաջ Հայաստանի Հանրապետութեան վաստակաւոր արուեստագետ Դաւիթ Յակոբեանը ընթերցեց Աւետիս Ահարոնեանի՝ հայ ժողովուրդին ուղղուած «Յարգա՛նք քեզ» ձօնը:

Ելոյթներ ունեցան ընկերաբան, իրանագետ, պատմական գիտութիւններու թեկնածու Սարգիս Մկրտչեան, Ազգային ժողովի «Հայաստան» խմբակցութեան պատգամաւոր Գառնիկ Դանիելեան եւ ՀՅԴ Հայաստանի երիտասարդական միութեան Կեդրոնական վարչութեան նախագահ Գոռ Սարգսեան:

Սարգիս Մկրտչեան իր խօսքին մէջ նշեց, որ Հայաստանը շատ բարդ իրավիճակի մէջ կը գտնուի եւ այս իրավիճակէն դուրս գալու համար պէտք է հասկնանք, որ թըշնամիի ցանկութիւնն է, որ հիւսիսափոփոխեց, կտրուիլիք, բայց մենք պէտք է պատրաստուինք երկարատեւ պայքարի՝ յանուն ազատագրական պայքարին մէջ ընկածներուն, Հայոց Ցեղասպանութեան 1,5 միլիոն զոհերուն: «Պիտի շարունակենք պայքարը մեր արդար իրաւունքներուն ձեռքբերման համար, հզօր ու զարգացած պետութիւն ունենալու համար, արժանապատիւ խաղաղութիւն հաստատելու համար»:

«Միևնակ չձգենք տաւուշին, Արցախը կորսնցուցինք՝ չկարենալով համախմբուիլ, Տաւուշը մեր դարպասն է», իր խօսքին մէջ ըսաւ Գառնիկ Դանիելեան՝ նշելով, որ Տաւուշի մէջ ստեղծուած է Հայրենիքի պաշտպանութեան ճակատ Տաւուշի թեմի առաջնորդ Բագրատ Եպս. Գալստեանեանի առաջնորդութեամբ, եւ տաւուշին կանգնած է պաշտպանելու իր հողը:

Երթին մասնակիցները Հանրապետութեան հրապարակին մէջ այրեցին Թուրքիոյ եւ Ատրպէյճանի դրօշները, ապա «Պայքար, պայքար, պայքար» վանկարկումներով, հայրենասիրական երգերով ու պահանջատիրական կոչերով շարժեցան դէպի Ծիծեռնակաբերդի յուշահամալիր:

Երթը կ'առաջնորդէր հոգեւոր դասը: Մասնակիցները իրենց հետ կը տանէին դրօշներ այն երկիրներուն, որոնք ճանաչեցին Հայոց Ցեղասպանութիւնը:

Մայր աթոռ Ս. Էջմիածնի դիւանապետ Արշակ Արք. Խաչատրեան Ծիծեռնակաբերդի մէջ իր խօսքը ուղղեց ներկաներուն եւ հայ ժողովուրդին՝ ըսելով. «Ով որ կը փորձէ ջնջել կամ կասկածի տակ առնել Հայոց Ցեղասպանութեան իսկութիւնը, նզովեալ պիտի ըլլայ սերունդէ-սերունդ, ով որ կը փորձէ ջնջել պատմական մեր յիշողութիւնը, անիծեալ պիտի ըլլայ անոր եւ անոր ընտանիքին անունն ու յիշատակը յաւիտենապէս»:

Ծիծեռնակաբերդի յուշահամալիրին մէջ երթին մասնակիցները մէկ վայրկեան լռութեամբ յարգանքի տուրք մատուցեցին Հայոց Ցեղասպանութեան աւելի քան 1,5 միլիոն սուրբ նահատակներու յիշատակին: Երթին մասնակիցները ծաղիկներ գետեղեցին անմար կրակին շուրջ: Տեղի ունեցաւ հոգեհանգստեան կարգ:

ՅԱԶՎԿՆՈՒԹՅԱՆ ՏԱՌԵՑԻՆ ԲՈՂՈՔԻ ԸՆԴՐՈՒՄՆԵՐԸ ԿԸ ԸՆԴՐՈՒՆԱԿՈՒՄ

Տաւուշի մէջ ընթացք առած Հայաստանի իշխանութիւններուն սահմանազատման պատրուակով Ատրպէյճանին գիւղեր յանձնելու քաղաքականութեան դեմ բողոքի շարժումը կը շարունակուի: Երկուշաբթի, 29 Ապրիլին, քաղաքացիները փակած էին Արմաւիր-Կիւմրի միջպետական ճանապարհը՝ յաջակցութիւն Տաւուշի:

Բողոքի շարժումին մասնակիցներուն կողքին էին Ազգային ժողովի «Հայաստան» խմբակցութեան պատգամաւորներ Գեղամ Մանուկեան եւ Միւր Սահակեան: Ոստիկանութեան ներկայացուցիչը յայտարարած է, որ պէտք է բանալ ճանապարհը. «Երկու վայրկեան ժամանակ կու տանք, եթէ ճանապարհը չբացուի, անկէ յետոյ յստակ կը դառնայ, որ ոստիկանի օրինական պահանջը չէք կատարեր: Ոչ ոք իրաւունք ունի ուրիշի ազատ տեղաշարժը սահմանափակել»:

Գեղամ Մանուկեանը նկատած է. «Հասարակական կարգը կը խախտուի ամբողջ Հայաստանի մէջ, նաեւ անվտանգային իմաստով, որովհետեւ



Նիկոլ Փաշինեանի գլխաւորութեամբ անօրինական կերպով սահմանակէտեր կը տեղադրուին: Այսօր բոլոր ոստիկանները իրականութեան մէջ յարգելով Հայաստանի Հանրապետութեան սահմանադրութիւնը, պէտք է ըլլային կառավարութեան շէնքին դիմաց եւ ձերբակալէին ամենամեծ հասարակական կարգը խախտող Նիկոլ Փաշինեանը»:

Հակառակ ոստիկաններու պահանջներուն՝ բողոքի շարժումին մասնակիցները երկար ժամանակ փակ պահած են ճանապարհը՝ յիշեցնելով, որ իրենք կը գործեն յանուն հայրենիքի:

Իրավիճակն այստեղ յաճախ լարուած է: Երթեկութիւնը պահ մը վերականգնած է, սակայն շարժումին մասնակիցները կրկին փակած են ճանապարհը:

Ցաջակցութիւն Տաւուշին՝ նոյն օրը առաւօտեան Երեւանի մէջ բեռնատար մը՝ «Միացի՛ր կամ յանձնի՛ր» գրութիւններով փակած է Միասնիկեան պողոտան:

ՆԱԴՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
ՆՅԴ ՄԻՋԻՆ ԱՐԵՒԵԼՔԻ ՊԱՏԱՆԵԿԱՆ
ՄԻՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎԻՆ

12-14 Ապրիլ 2024-ին Թեհրանի մեջ, ՅՅԴ Բիւրոյի Երիտասարդական գրասենեակին կազմակերպութեամբ գումարուեցաւ ՅՅԴ պատանեկան միութիւններու պատանիներու յատուկ խորհրդաժողովը...



մարել մինչեւ անոր արդար լուծումը: Միջին Արեւելքի քաղաքական, ապահովական, ընկերային թէ այլ բազմաբնոյթ կացութիւններու, իրավիճակներու ու մթնոլորտի մէջ հասունցած պատանիները դրսեւորեցին լրջախոհ կեցուածք եւ որպէս դաշնակցական պատանի՝ իրենց կոչումը արդարացուցին: Մարդուժի պատրաստութեան շրջագծէն ներս կազմակերպուած այս գործունէութիւնը հիմնականօրէն կը նպատակադրէր պատանիներու ներկազմակերպական տեղեկութիւններու, գիտելիքներու ու հմտութիւններու տարածքը ընդարձակել ընդգրկելով՝

Ա. - Տարածաշրջանի ՅՅԴ պատանեկան միութիւններուն վերաբերող կազմակերպական քննարկումներ ու սերտողութիւններ,

Բ. - Ծանօթանալ տարածաշրջանի պատանիներու մտահոգութիւններուն, ազգային ու միութենական հարցերու մօտեցումներուն, մտահորիզոնին եւ հեռանկարներուն,

Գ. - Նպաստել պատանիներու կազմակերպական փորձառութեան ձեռքբերման եւ տարածաշրջանի պատանեկան միութիւններու ու պատանիներու միջեւ ընկերական յարաբերութիւններու սերտացման:

Խորհրդաժողովը նաեւ կը միտէր խորացնել ՅՅԴ պատանեկան միութիւններուն մէկ ընտանիքի պատկանելու գաղափարը եւ մեր գաղափարական դաստիարակութիւնը ներթափանցելի դարձնել պատանիներու կրթութեան մէջ, միաժամանակ պատրաստելով ապագայ մարդուժի տունեալներու անձնադարան:

Այս օրերուն, մեր ազգին ու հայրենիքին դիմագրաւած դժուար պայմաններուն մէջ, խորհրդաժողովը պատանիներու ազգային ու հայրենասիրական դաստիարակութեան վերաբերող ծրագիրներ քննարկեց՝ կեդրոնաւալով նորարար, պատանիները հետաքրքրող եւ միաժամանակ ազգային արժեքները գերազույց արժեքներ համարող ու անոնց դրսեւորումը պատանիներու ամօրեային մէջ զգալի դարձնող նախագիծերու վրայ:

Նկատելով, որ նմանօրինակ գործունէութիւններ մեծապէս կը նպաստեն պատանիներու փորձառութեան կրկնապատկման, աշխարհայեացքի ընդլայնման եւ նոր տեսլականներու ձեւաւորման՝ խորհրդաժողովը կարելորեց անոնց յաճախակի կազմակերպումը: Զարոգչական բնագաւառի մէջ ժողովը հաստատեց ՅՅԴ պատանեկան միութիւններու աշխատանքները լուսարձակի ներքեւ պահելը եւ համացանցի ընձեռած հնարաւորութիւններէն օգտուելով՝ յարաբերական ու քարոզչական աշխատանք ծաւալելը: Արցախի պատանեկան միութեան գործունէութեան սատար հանդիսանալու համար խորհրդաժողովը սերտեց եւ առաջարկեց տարածաշրջանային թէ համահայկական նախաձեռնութիւններու տարբերակներ:

Խորհրդաժողովի օրակարգի քննարկման եղանակը, որ կը յատկաւշուեր բժախնարութեամբ եւ խորքայնութեամբ, ցուցանիչ էր, որ Միջին Արեւելքի ՅՅԴ պատանեկան միութիւնները տասնամեակներու ընթացքին իրենց ծաւալած գործունէութեամբ իրենց հիմնադրութեան թիրախը նուաճած են:

Խորհրդաժողովը հիւրընկալող Թեհրանի կազմակերպական շրջանը

ՄԱՆՐԱՎԿԵՊԵՐ



Յակոբ Չոլաքեան

21. - Քնարական ու գաւեշտականը համատեղ

Պէյրութի Ազգային վարժարաններէն մէկուն տնօրէնը 9-րդ դասարան մտաւ, նստաւ աթոռիս ու ձեռքով հասկցուց, որ ես դասս վարեմ: Կեղծ ժպիտով մը ընդունեցայ անկոչ հիւրը, որ հաւանաբար հանգամանք մըն ալ ուներ, այլապէս ուրկէ՞ այսքան ամենատիրութիւն: Նոր դասը քնարերգակ Մկրտիչ Պէշիկթաշլեանն էր: Քնարերգակ եւ քնարերգութիւն բառերուն մասին հակիրճ բացատրութիւն մը տալ անհրաժեշտ էր: Նախ՝ քնար երաժշտական գործիքը, օտար հոմանիշը՝ լիր. ըսի թէ Քրիստոսէ առաջ 7-6 դարերուն Յունաստանի մէջ ապրած է Սաֆո անունով բանաստեղծուհի մը, որ երգած է կնոջական սերը՝ նուազելով, ըստ անանդութեան, լիրի՝ քնարի վրայ: Ատկէ՝ անձնական ապրումներ երգող բանաստեղծութիւնը համաշխարհային գրականութեան մէջ յետագային կոչուած է լիրիզմ, իսկ հայերէնի մէջ քնարերգութիւն: Ուրեմն՝ Մկրտիչ Պէշիկթաշլեան քնարերգակ բանաստեղծ մըն է, որովհետեւ երգած է անձնական ապրումներ:



Միջոցին կը նկատի մարդուն անհանգիստ շարժումները, երբ յանկարծ ձեռքը սեղանին գարնելով ըսաւ.

- Յայ աշակերտը ինչ պետք ունի լիրի-միրի, Սաֆոյի-Մաֆոյի մասին լսելու:

Այնքան բարկացած էր, որ ձեռքը դպաւ հաստ ակնոցին, որ ինկաւ վար, աշակերտուհիի մը ոտքերուն տակ: Ակնոցը վերցնող չեղաւ. հռչոց մը փորթաւ դասարանին մէջ եւ գրասեղաններուն վրայ՝ ափի հարուածներու տարափ մը: Մարդը հազիւ կրցաւ ակնոցը գտնել, վերցուց ու դուռը գտնելով՝ վազեց դուրս:

Լռութիւն:

Աշակերտ մը հարցուց.

- Սաֆոյէն բանաստեղծութիւններ հասա՞ծ են մեզի:

Ուրիշ մը.

- Ի՞նչ էր Մկրտիչ Պէշիկթաշլեանի սերը:

Դասը արդէն հունի մէջ էր:

22. - Կնքահայրս

Կնքահայրս՝ Ստեփան Թիթիգեանը, գիւղի ճամբաներուն վրայ թէ քաղաքի մէջ՝ փողոցը, միշտ տեսած եմ կոկիկ համազգեստով, փողկապով, մաքուր ակնոցներով, փայլուն կօշիկով: Եղած էր Անթիլիասի դպրեւանքի 1938-ի շրջանաւարտներէն մէկը եւ ուսուցչութեան մտած:

Ըստ իրեն՝ ուսուցչական ասպարէզ կը մտնէս հիւրի պէս, բայց ամբողջ կեանքը կը դառնայ ուսուցիչ մնալու, ուսուցիչ դառնալու անողոք պայքար մը:

- Որովհետեւ, - կ'ըսէր, - ուսուցչութիւնը ինքնահաստատման դաժան ասպարէզ մըն է, ամէն անգամ պարտուած կը զգաս, բայց չես փախչիր, չես հեռանար ասպարէզէս...

Կը հասկնայի. տեղ մը անելի հմուտ պատասխան մը կը փնտռես, տեղ մը վարմունք մը հասկնալ կ'ուզես, տեղ մը համոզումի մը հետ կը բախիս, տեղ մը լռել պետք է գիտնաս... Բայց կը թուի, թէ չես կրցած... Պարտուած ես: Բազմաթիւ դպրոցներ մտած ելած էր. Քեսապի Ուսումնասիրաց վարժարան, Յալեպի Լազար Նաճարեան, Դամասկոսի Սահակեան, Պէյրութի Թեքէեան եւ չեմ գիտեր, թէ ո՛ր... Հսկայ փորձառութիւն մը, վաստակ մը ուներ ու դեռ կը շարունակէր... ուսուցիչ դառնալու համար պայքարիլ:

Ամռան գիւղ կու գար: Յամառօրէն կ'աշխատէր արտին ու պարտեզներուն մէջ, նոր տնկիներ կը բերէր, նոր պարտեզ կը հասցներ, նոր տուն կը կառուցէր... Երանութիւն էր ամէն առաւօտ այդ պատշգամը նստած սուրճ խմել՝ նայելով ոտքերուդ տակ ծաւալող Միջերկրականին, դեմը խոյացող Կասիոսին:

- Ա՛յ հերիք է, կնքահայր, - ըսի օր մը, - նախքան քեզ դպրոցէն դուրս դնելը, դուն էլիր եկուր գիւղ, տունդ նոր է, պարտեզդ՝ հասուն ...

- Իրենց գործն է, իրենց գիտնալիքը. տեղ մը դուռէն դուրս կը դնեն, տեղ մը ներս կ'առնեն, կամ դուն կը բանաս քու դպրոցդ, - ըսաւ, - այդ է ուսուցիչը՝ անաւարտ ու անվերջ ճանապարհի մը ճամբորդը...:

իր ցուցաբերած ջերմ մօտեցումով ու ընդունելութեան հարազատութեամբ վերահաստատեց Դաշնակցութեան աշխարհասփիւռ կառոյցներու միահամուռութիւնը:

Յառաջիկայ ամիսներուն պիտի կազմակերպուի Երոպայի եւ Ամերիկաներու պատանեկան միութիւններու նմանաբնոյթ խորհրդաժողովներ:

ՅՅԴ Բիւրոյի Երիտասարդական Գրասենեակ

ԻՆՉ ԿՐՍԵՆ ԱՍՏՂԵՐԸ

Խոյ
Նոր նպատակ մը պիտի հետապնդէ՝ շնորհիւ նոր մարդոց հետ յարաբերութիւններու մշակման: Շաբաթը բարի է:

Ցուլ
Նիւթական գետնի վրայ բարելաւում պիտի արձանագրէք եւ պաշտօնի բարձրացում պիտի ունենաք: Խանդավառուեցէ՛ք:

Երկուորեակ
Բախտաբեր օրեր պիտի դիմաւորէք եւ մեծ յաջողութիւն արձանագրէք: Ձեր մտերիմ բարեկամը պիտի աջակցի ձեզի:

Խեցգետին
Աշխատանքի վայրին մէջ փոփոխութիւններ տեղի պիտի ունենան եւ մանր-մունր հարցեր պիտի ծագին: Ուշադիր եղէ՛ք:

Առիծ
Ձեր տքնաջան աշխատանքներուն պտուղը ի վերջոյ պիտի քաղէք: Հեռուոր բարեկամ մը նեցուկ պիտի կանգնի ձեզի:

Կոյս
Ձեր ծախսերը կրճատեցէ՛ք, որպէսզի նեղ կացութեան չմատուցիք: Լաւատեսութեամբ վարուեցէ՛ք ձեր շուրջիներուն հետ:

Կշիռք
Օտար մարդոց հետ յարաբերութիւններ պիտի մշակէք եւ գնահատուիք: Ձեր առողջութեան ալ հոգ պէտք է տանիք:

Կարիճ
Ձեր բնակութեան վայրը փոփոխութեան պիտի ենթարկուի եւ դուք հոգեպէս պիտի խաղաղիք: Կեանքի նոր փուլ մը պիտի սկսիք այս շաբաթ:

Աղեղնաւոր
Ձեր տան մէջ նոր իրեր պիտի գնէք եւ ուրախանաք: Հին երազ մը պիտի իրականանայ վերջապէս:

Այծեղջիւր
Ձեր ընտանիքի անդամներուն նկատմամբ հետաքրքրութիւն ցուցաբերեցէ՛ք: Բարի լուր մը մեծապէս պիտի խանդավառէ ձեզ:

Ձրիոս
Գործի մէջ մեծ յաջողութիւն մը պիտի արձանագրէք եւ գնահատուիք: Հարազատ անձ մը պիտի աջակցի ձեզի:

Ձուկ
Ձեր եկամտի աղբիւրը պիտի բարելաւուի եւ նոր պարտականութիւններ պիտի ստանձնէք: Պատրաստուեցէ՛ք:



ԱՐԵՒՈՒՆ ԱԶԳԵՑՈՒԹԻՒՆԸ ԱՄՌԱՆ ՏԱՔ ՕՐԵՐՈՒՆ

Արեւը մեզի կը դրկէ օգտակար եւ վնասակար զանազան ճառագայթներ: Մեր օգտագործման եղանակն ալ կապ ունի այդ ճառագայթներուն հասցուցած վնասին հետ: Ճառագայթները կրնան մեզ տաքցնել կամ այրել, ծիրանի պէս ոսկեգօծ դարձնել կամ կարմրցնել, գեղեցկացնել կամ ծերացնել:



Առողջապահական տեսակետէ մեկնելով, արեւուն 2024-ի միակ առաւելութիւնը՝ անդրմանիշակագոյն ճառագայթներու ազդեցութեամբ D կենսանիւթի արտադրութիւնը եւ մաշկի բջիջներուն մէջ, որ ոսկրաթելութիւնը կանխարգիլող միջոց կը համարուի եւ անհրաժեշտ կենսանիւթ՝ մանկութեան շրջանին ոսկորներու կազմաւորման համար:

Սակայն վերջին տարիներուն մթնոլորտային Օզոնի խաւին նօսրացումը աւելի վտանգաւոր դարձուցած է արեւուն ազդեցութիւնը: Հետեւաբար հարկ է պաշտպանուիլ անկէ: Արեւուն ճառագայթին երկարատեւ ազդեցութիւնը կրնայ նոյնիսկ մաշկի քաղցկեղի պատճառ դառնալ, յատկապէս, երբ տեղի կ'ունենայ մանկական հասակին, որովհետեւ այդ տարիքին մաշկին գոյնի բջիջները աւելի դիւրագագ կ'ըլլան եւ վնասուելով կրնան հետագային հիւսնորութիւն պատճառել:

Ինչպէ՞ս կրնանք լաւ գոյն տալ մաշկին առանց արեւահար դառնալու:
Արեւուն պէտք է ենթարկուիլ կամ վարժուիլ աստիճանաբար:

Առաջին օրը 10 վայրկեան, յաջորդ օրը 15 վայրկեան եւ այսպէս յաջորդաբար ամէն օր: Մնացեալ ժամերը պէտք է անցընել ճառագայթներու ազդեցութենէն հեռու, որպէսզի մաշկը միջավայրին վարժուի:

Սպիտակ մաշկը շատ զգայուն է, իսկ թուխը՝ դիմացկուն: Խարտեաշները, մանաւանդ շէկերը, պէտք է զգոյշ ըլլան արեւուն ճառագայթներէն: Արեւու լոգանքին ընթացքին մարմինը պէտք է օժել արեւէն պաշտպանող քսուկներով, որոնք մաշկը կրնան պաշտպանել այրուածքէն: Քսուկը պէտք է տարածել նաեւ ականջներուն վրայ, իսկ շրթունքը պաշտպանել պայծառ շրթներկով:

Եթէ օրուան ընթացքին արեւուն ճառագայթներուն պիտի ենթարկուիք, պէտք է հրաժարիք ծանր եւ համեմուած կերակուրներէն կամ ոգելից ըմպելիներէն:

Արեւուն ճառագայթները աւելի վնասակար են առաւօտեան ժամը 10:00-էն յետմիջօրէի ժամը

2:00: Այդ ժամերուն կրնաք արեւահար ըլլալ՝ նոյնիսկ ամպոտ օրերուն:

Ի՞նչ կրել արեւէն պաշտպանուելու համար:
-Արեւի ակնոց, որ կը կլանէ ցանցենիին համար վտանգաւոր ճառագայթներուն մէկ մասը:
-Գլխարկ, որ պիտի պաշտպանէ գլուխը, դեմքը եւ վիզը ճառագայթներու ուղղակի ազդեցութենէն: Գլխարկը շատ կարեւոր է յատկապէս մանուկներուն համար:

-Եթէ մագերուն տեսակը շատ զգայուն է, յատուկ օճառ պէտք է օգտագործել: Իսկ եթէ մեր մագերը երկար են, հարկ է հիւսել զանոնք, որպէսզի աղը կամ լողաւագանի քլորը չթափանցէ անոնց մէջ:

Շովեզերքի արեւանցները պէտք եղած չափով չեն պաշտպաներ մեզ արեւէն, որովհետեւ աւազը կը ցոլացնէ անդրմանիշակագոյն ճառագայթներուն մօտաւորապէս 80%-ը: Ուստի մանուկները պէտք է թեթեւ շապիկներով եւ տաքաւորով պաշտպանել, որովհետեւ մանուկներուն համար մաշկային քիմիական քսուկները կրնան վտանգաւոր ըլլալ:

Կը յանձնարարուի մինչեւ մէկ տարեկան մանուկները հեռու պահել արեւուն ուղղակի ճառագայթներէն, որովհետեւ անոնք արեւահար դառնալով ջրազրկման ենթակայ կրնան ըլլալ:

Չգուշացէ՛ք աղի ջուրէն, որովհետեւ ան մարմինին կենսուժը մաքրելու եւ մարմինը հակաէնթալու կողքին, մորթին եւ մագերուն վնաս կրնայ հասցնել, եթէ աղը մարմինին վրայ մնայ երկարատեւ: Հետեւաբար ամէն ծովու լոգանքէ տեք, հարկ է մեր դեմքը եւ մարմինը մաքուր ջուրով լուալ, այլապէս աղի ջուրը պիտի ցամքի եւ մորթը պիտի ներծծէ ամբողջ աղը, իսկ կնճիռները երեւելի պիտի դառնան:

Անհրաժեշտ է յաճախակի ջուր խմել օրուան ընթացքին, (մօտաւորապէս 2լիթր), նախընտրելի է մանաւանդ հանքային ջուրը:

Որպէսզի մեր մաշկը կանխահաս ծերացման չենթարկուի, հարկ է արեւու լոգանքի ժամերը նուազագոյնի իջեցնել եւ լաւապէս պաշտպանուիլ:

Ի՞նչ պէտք է ընել արեւահարութեան պարագային:

Նախ արկածեալը փոխադրել օդասուն տեղ մը, զգեստները հանել, թաց սպունգ մը քսել մարմինին եւ խուսափիլ շատ պաղ ջուրէն: Մեծերուն պարագային կարելի է խմցնել թանձր սուրճ, որ խթանէ արեւան շրջանառութիւնը:

Պէտք է մոռնալ, որ վտանգը կը սկսի այն պահուն, երբ կը նկատենք, որ առատօրէն հոսող քրտինքը յանկարծ կը դադրի:

Ի՞նչ պէտք է ուտել կարճ ժամանակի մէջ պղնձագոյն մորթ ունենալու համար:

Թելադրելի են՝ լոլիկը, շոմիկը, ստեպոհիկը, Նարինջը, սեխը, որոնք մեծաքանակ կենսանիւթեր կը պարունակեն եւ մորթի տարրալուծական փոխանակումներուն կը նպաստեն: Օգտակար է նաեւ խնձորը, որ կը նպաստէ մաշկի գոյնին մթազնումին, որովհետեւ ան պղինձ կը պարունակէ:

Մարզական



Ռաֆֆի Սիկանյան

ՏԵՂԱԿԱՆ

ԼՈՒՐԵՐ ՍՈՒՐԻՈՅ ՄԱՐԶԱԿԱՆ ԿԵԱՆՔԷՆ

- Պատմության մեջ 6-րդ անգամ ըլլալով Դամասկոսի Սաուրայի պալատի աղջկանց խումբը յաջողեցավ տիրանալ Սուրիոյ հանրապետական բաժակին, աւարտական մրցումին 55-40 արդիւնքով պարտութեան մատնելով Ռահտէն:



- Սուրիոյ Թենիսի պատանեկան հաւաքականը տիրացաւ արեւմտեան Ասիոյ թենիսի մրցաշարի պիտոյեանութեան, աւարտական մրցումին պարտութեան մատնելով Սեուտական Արաբիոյ կազմը:

ՀԱՅԿԱԿԱՆ

ԲՈՆՑՔԱՄԱՐՏԻԿ ԲԱՐԵՂԱՄ

ՅԱՐՈՒԹՅՈՒՆԵԱՆ՝ ԵՐՈՊԱՅԻ ՓՈՆԱՆՈՅԵԱՆ

Հայաստանի բռնցքամարտի հաւաքականի անդամ Բարեղամ Յարութեան Եւրոպայի առաջնութեան արծաթե մետալակիր դարձաւ: Սերպիոյ մայրաքաղաք Պեկրատի մէջ ընթացող բռնցքամարտի Եւրոպայի առաջնութեան տղամարդկանց 48 քկ. ծանրութեան կարգի եզրափակիչին, Բարեղամ Յարութեան մրցակից ունեցաւ ռուս ներկայացուցիչ Էտմոնտ Խուտոյեան, որ պարտուեցաւ 5 - 0 արդիւնքով: Աւելի ուշ 92 քկ. ծանրութեան եզրափակիչ հանդիպումին, Նարեկ Մանասեանի մրցակիցը դարձաւ կրկին Ռուսիայէն Մուսլիմ Հաճիմակովմետովը:



Յիշեցնենք, որ բռնցքամարտի Եւրոպայի առաջնութեան կանանց հաւաքականի անդամներ Անի Յովսէփեան եւ Անուշ Գրիգորեան դարձած էին պրոնզե մետալակիրներ: Իսկ տղամարդկանց հաւաքականի Եւ-ի պրոնզե մետալներ նուաճեցին Նաեւ Արթուր Բազեան, Արթուր Սահակեան եւ Արարատ Յարութեան:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ

ՊԱՐՍԵԼՈՆԱՆ ՄՏԱԴԻՐ Է ԿԱՃԱՌԵԼ ՌՈՊԵՐԹ ԼԵԱՆՏՈՎՍԿԻՆ

Catalunya Radio-ն յայտարարեց, որ Սպանիոյ պիտոյեան Պարսելոնան մտադիր է ամռան փոխադրաշրջանին վաճառել Լեհաստանի հաւաքականի յարձակողական խաղացող Ռոպերթ Լեանտովսկին: Նպատակը ակումբի ֆինանսական վիճակի կայունացումն է: Պարսելոնան կը փափաքի ազատիլ Լեանտովսկիի բարձր աշխատավարձի ծախսէն: Այս մրցաշրջանին Լեանտովսկիի Զաթալոնական ակումբէն եկամուտը կը հասնի 26 միլիոն եւրոյի, իսկ յաջորդ մրցաշրջանին կը կազմէ 32 միլիոն եւրո: Transfermarkt-ը 35-ամեայ ֆուլթայլիստի փոխադրութիւնը կ'արժեւորէ 15 միլիոն եւրոով: Անոր պայմանագիրը Պարսելոնայի հետ նախատեսուած է մինչեւ 2026 թուականի Յունիս ամիսը:



ԽԱԶԲԱՌ (ՄԻ 372)

Պատրաստեց՝ Մարինա Զիլաբոզեան-Պօղիկեան

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1												
2												
3												
4												
5												
6												
7												
8												
9												
10												
11												
12												

Հորիզոնական

- 1- Տժգոյն, գունատ: Գրաբար՝ ո՛ր:
- 2- Իրար գարնուող մետաղի աղմուկ: Հակառակ՝ շողկապ:
- 3- Համաձայն:
- 4- Քէն: Կամայական: Իրերայաջորդ:
- 5- Շարունակ: Փլատակ:
- 6- Քնած: Հակառակ՝ տառի մը հարեանները:
- 7- Փոքրացնող մասնիկ: Հակառակ՝ 5004: Հիւանդութիւն ունեցող:
- 8- Յովհաննէս Թումանեանի ծննդավայրը: 660: Տառի մը անունը:
- 9- Ցաւի ճիչ: Հակառակ՝ 360: Գոյութիւն ունին:
- 10- Նայուածք: Ձայնանիշ:
- 11- Կիսատ: Հակառակ՝ բայական լծորդութիւն:
- 12- Պտուղներու պարտէզ:


Ուղղահայեաց

- 1- Իշխանուհի: Կանաչ:
- 2- Հակառակ՝ տառի մը անունը: Ճանկաւոր երկաթ, գործովուն յատակը կ'իջեցնեն՝ նաւը անշարժացնելու համար:
- 3- Վանայ լիճի կղզիներէն: Հակառակ՝ ժամանում: Զիմքի տպաւորութիւն:
- 4- Դրոշմ: Գրաբար՝ օր:
- 5- Թանկագին քար: Հակառակ՝ գիշատիչ կենդանի:
- 6- Աղացուած ցորեն: Անվերջնատառ՝ տեսիլ:
- 7- Ճանապարհ: Հակառակ՝ դրամ:
- 8- Տիպար, օրինակ:
- 9- Ապիկար: Հակառակ՝ խորք:
- 10- Էական բայ:
- 11- Շաղկապ: Ահաւոր պոռաս:
- 12- Յակոբ Օշականի բանաստեղծական շունչով գրած պատմուածքը:

ԽԱԶԲԱՌ (ՄԻ 371)

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1	ա	ր	ա	մ	ե	ր	կ	ա	ն	ե	ա	ն
2	ը	ր	լ	ն	կ	ա	ւ	ե	ր	?		
3	մ	ա	ւ	ն	յ	մ	ն	լ				
4	է	ն	ա	ւ	ծ	ե	ւ	է	ք			
5	ն	ւ	ա	տ	ր	ա	ս	խ	լ			
6	գ	ր	ա	յ	ն	կ	ի	ա	կ			
7	ա	ի	լ	ն	ւ	ա	ս	ն	ա			
8	ը	ա	ե	կ	ն	է		տ				
9	օ	օ	ր	ն	ա	լ		մ	ի			
10	ա	ա	ւ	ք	ա	յ	ն	ն				
11	ն	ր	ա	ն	է	ն	խ	ն	ւ	ց		
12	ն	ը		ա	յ	լ	մ	ա	?	ի		

ԼՈՒՐԵՐ



«together» ՀԱՍՏԱՏՈՒԹԵԱՆ ԿԵԴՐՈՆԻ ԲԱՅՈՒՄԸ ՀԱԼԵՊԻ ՄԵՋ

Միջին Արևելքի գանազան երկրներու մէջ կեդրոններ ունեցող «together» հաստատութիւնը, Սուրիոյ մէջ եւս իր կեդրոնը բացաւ Զալէպաղաքի Վիլլաներ թաղամասին մէջ: Կեդրոնին բացումը տեղի ունեցաւ հոկտեմբեր 28-ին:



Միջին Արևելքի գանազան երկրներու մէջ կեդրոններ ունեցող «together» հաստատութիւնը, Սուրիոյ մէջ եւս իր կեդրոնը բացաւ Զալէպաղաքի Վիլլաներ թաղամասին մէջ: Կեդրոնին բացումը տեղի ունեցաւ հոկտեմբեր 28-ին:

Յայտնեց համայնքապետներուն՝ իրենց ներկայութեան եւ հաստատութեան աշխատանքներու ողջ ընթացքին իրենց մշտական գործակցութեան համար:

Այս առիթով, Բերիոյ Զայոց Թեմի Առաջնորդը խօսք անելով դիտել տուաւ, որ յատկապէս Սուրիոյ պատերազմի ծանր տարիներէն ետք, քրիստոնէական, մարդկային արժէքներու պահպանման, յոյսի վերականգնումին եւ ժողովուրդին ծառայութեան իմաստով նման հաստատութեան ներկայութիւնը սուրիական կեանքին մէջ յոյժ կարեւոր գործօն կը համարուի: Ապա, շնորհաւորեց հաստատութեան տնօրէն

տատութեան ներկայութիւնը սուրիական կեանքին մէջ յոյժ կարեւոր գործօն կը համարուի: Ապա, շնորհաւորեց հաստատութեան տնօրէն



Բերիոյ Զայոց Թեմի Առաջնորդին կողքին բացման արարողութեան մասնակցեցան Բերիոյ Թեմի Կաթողիկէ Զայոց Առաջնորդ Արհի. Տ. Պետրոս Արք. Միրիաթեան, Սուրիոյ Զայ Աւետարանական Զամայնքի Պետ Վերապատուելի Դոկտ. Յարութիւն Սելիմեան, Արաբ Աւետարանական Զամայնքի Պետ Իպրահիմ Նսէյր, քոյր համայնքներու, Սուրիոյ Խորհրդարանի, Նահանգային խորհուրդի Բերիոյ Զայոց Թեմի

Յակոբ Յակոբեանը, մաղթելով որ Աստուած միշտ աստուածային իմաստութեամբ եւ շնորհքով օժտէ զայն, որպէսզի այս հաստատութիւնը կարենայ բոլոր համայնքներուն եւ Սուրիոյ ժողովուրդի բոլոր հատուածներուն, այնտեղ ուր կարիքը կայ, իր ծառայութիւնը մատուցէ:

Սրբագան Զայոցը աղի եւ ջուրի օրհնութիւն կատարեց: Ապա, համայնքապետները միասնաբար աղօթեցին վասն հաստատութեան բարեյաջող գործունեութեան:

Այնուհետեւ, համայնքապետները եւ ներկայ հիւրերը իրենց մաղ-



Իմ Նսէյր, քոյր համայնքներու, Սուրիոյ Խորհրդարանի, Նահանգային խորհուրդի Բերիոյ Զայոց Թեմի



Ազգ. Իշխանութեան, կազմակերպութիւններու եւ միութիւններու ներկայացուցիչներ:

Բացման արարողութենէն ետք հաստատութեան տնօրէն Յակոբ Յակոբեան, ջերմապէս ընդունելով ներկաները, ծանօթացուց զիրենց տարածքային կեդրոնի բաժանմունքներուն: Ապա, շնորհակալութիւն

թանքները արձանագրեցին ոսկեմատեանին մէջ: Ապա, տեղի ունեցաւ այս առիթով պատրաստուած կարկանդակի հատում եւ ներկաները կոկիկ հիւրասիրութեան ընթացքին շնորհաւորական բարեմաղթութիւններ փոխանակեցին հաստատութեան անձնակազմին:

Թողակից

ԿՐԹԱՍԻՐԱՆՆԻ ԳԵՄՊԵՐՃԵԱՆ ԵՐԿՐԴ. ՎԱՐԺԱՐԱՆԻ ԱՆԱԿԵՐՏՆԵՐԸ ՈՒՍՈՒՆԵՐԸ ՀԱՅՈՑՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ 109-ՐԴ ՏԱՐԵԼԻՅԸ

Երեքշաբթի, 23 Ապրիլ 2024-ին, Կրթասիրաց Ս. Զեմպերճեան Երկր. Վարժարանի աշակերտները ոգեկոչեցին Զայոց Յեղասպանութեան 109-րդ տարելիցը՝ Կրթասիրաց Մշկթ. Միութեան «Չ. Գարիէլեան» սրահէն ներս, ներկայութեամբ՝ Վարժարանի հոգաբարձութեան անդամ Պէթթի Գասարեանի, վարժարանի տնօրէն երկրչփ. Անդրանիկ Պօղոսեանի, պետական

եան ու Մեղրի Սարաֆեան երգեցին, պարի ընկերակցութեամբ՝ Արեւիկա Սարգիսեանի եւ Սինդիա Պշարայի: Վարժարանի արաբերէն լեզուի ուսուցչուհի Ղուլուս ալ-Նաճճար օրուան պատգամը ուղղեց, դիտել տալով, որ Զայոց Յեղասպանութիւնը կազմակերպող թուրքը, Սուրիոյ պատերազմի տարիներուն եւս իր ոճրագործական եւ անմարդկային արարքը պարզեց:



տնօրէնուհի Ապրի Մուսան-Ատամի, պետական քննիչ Ֆաթիմա Թապշոյի, ընդ. տեսուչ Մարալ Դերձակեանի, ուսուցչական կազմին, դաստիարակներուն եւ բոլոր կարգերու աշակերտներուն:

Զայերէն պատգամը ուղղեց վարժարանի հայերէնաւանդ ուսուցչուհի Նորա Տանակեօգեան-Մանսուրեան: Ան յայտնեց, որ 24

Օրուան բեմավարութիւնը կատարեցին հայերէնաւանդ ուսուցչուհիներ Լիլիթ Տոյմօլեան-Փայասեան եւ Նանոր ժամկէտեան-Զայիթեան:

Բացման խօսքով հանդէս եկաւ հայերէնաւանդ ուսուցչուհի Դալար Նաճարեան-Թոսունեան:

Ան նշեց, որ այսօր Նոյնիկըն թուրքը այլ տիպարով, հաւատարիմ



Ապրիլը իւրաքանչիւր հայու սիրտը խոցող թուական է, որ խորապէս դրոշմուած կը մնայ մեր երկրէն ու խղճին վրայ: Ապա ըսաւ, որ Զայոց Յեղասպանութեան անելի քան 1,5 միլիոն սրբադասուած նահատակներու անմոռանալի յիշատակը մեզ պահանջատիրութեան պատասխանատուութեան դէմ յանդիման կը դնէ եւ կը ստիպէ կառչած մնալ մեր պապեանական արմատներուն, անանդութիւններուն, պատմութեան, Զայաստանեայց Առաքելական Ս. Եկեղեցոյ եւ ի մասնաւորի՝ հայոց լեզուին:

Իր ոճրային բնոյթին եւ իր անցեալի ու ներկայի ծրագրին, կը շարունակէ իր ուղին, անգամ մը եւս օգտուելով իրեն ընծայուած առիթներէն: Սակայն հայ ժողովուրդը իրաւունք չունի ընկճուելու, յուսահատելու կամ իրեն պարտադրուած անիրաւ ճակատագիրը ընդունելու:

Ան յայտնեց, թէ քսաներորդ դարակից բնի իրականացուած առաջին ու ամենամեծ ոճիրը, Եղեռնը՝ դատարկութենէն չէր յառաջացած, այլ՝ կանխամտածուած եւ անելի շուտ որոշուած էր, յանուն արհեսարբու թուրքին նպատակին ու շահերուն՝ Զայաստանը՝ առանց հայերուն տեսնելու եւ ձեռքազատելու «Զայկական Զայոց» կոչուող այն ուրուականէն, զոր ամենուրեք կը հալածէր թուրքը: Զամաշխարհային Ա. պատերազմը պատեհառիթը ընծայեց թուրքին՝ իրականացնելու յաճախ իր հետապնդած երազը:

Բեմը բարեզարդուած էր անմոռուկի եւ Ծիծեռնակաբերդի պատկերներով, որոնք պատրաստուած էին Յովիկ Օհանեանի եւ Մարիա Եղիայեանի ջանքերով:

Ան որպէս հայերէնաւանդ

Վարժարանի աշակերտները գեղարուեստական բովանդակալից յայտագիր մը ներկայացուցին:

Զայկական անմոռուկին իմաստին եւ նշանակութեան մասին ընթերցեց աշակերտուհի Մարիա Զրիստիա Եագուպեան: Ապա Մարինա Մինաս-